ՎԱՀԵ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող
anarzaba@gmail.com
ID 0000-0002-9569-2569
DOI:10.59523/1829-4596.2025.2(31)-3

ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵՎ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՍԱՐԴՈՒՐԻ II-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՍՏ Կ. Ֆ. ԼԵՄԱՆ-ՀԱՈՒՊՏԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ*

Ամփոփում

Ուրարտուի և Ասորեստանի միջև Սարդուրի II-ի (Ք. ա. մոտ 771–735)[1] օրոք ծավալված պայքարին առաջինն անդրադարձել է Կ. Ֆ. Լեման-Հաուպտը՝ հիմնական աղբյուր ունենալով Վանի Սուրբ Պողոս-Պետրոսի եկեղեցում գտնվող կոթողի վերին հատվածի բեկորներին արձանագրված Սարդուրի II-ի տարեգրությունը: Դրանում վկայված եփրատամերձ գոտում՝ Մելիդի շրջանում, իրականացված նվաճումների, ինչպես նաև Ուրարտուի և Ասորեստանի միջև ճակատամարտի առաջին անդրադարձը Կ. Ֆ. Լեման-Հաուպտինն է: Հետազոտողը, համադրելով բիայնական և ասորեստանյան սկզբնաղբյուրների, ինչպես նաև «Աստվածաշնչի» վկայութ-

* *Ներկայացվել է 24.X.2025 թ., գրախոսվել է 30.X.2025 թ., ընդունվել է տպագրության 22.XII.2025 թ.:*

[1] Թվագրման վերաբերյալ մանրամասն տե՛ս **Grekyan.** 2015, 99-105.

յունները, փորձեց վերականգնել երկու թագավորությունների միջև պայքարի համապատկերը: Շուրջ չորս տասնամյակ տևած հետազոտությունների ընթացքում Կ. Ֆ. Լեման-Հաուպտը վերանայեց Ք. ա. 743 և 735 թթ. իրողություններին առնչվող իր որոշ տեսակետներ, որոնք սակայն, հետազոտողի աշխատությունների դրվագային քննարկման պատճառով, չարծարծվեցին:

Բանալի բառեր՝ Ասորեստան, Կումմուխ, Արպադ, Եփրատ, Թիգլթապալասար III, Տուշպա, արշավանք:

Ներածություն

Անդրադառնալով ուրարտական աղբյուրներում վկայված Բիայնիլիի և Ասորեստանի միջև պայքարին՝ Կ. Ֆ. Լեման-Հաուպտը նշում է, որ Վանա ժայռի հյուսիսարևելյան հատվածում գտնվող «Գանձադռան» տարեգրությունում վկայված է Սարդուրի II-ի հաղթական արշավանքը մերձուրմյան ավազան՝ Մանա: Այնուհետ հարավարևելքում արքայի ձեռնարկած արշավանքների համատեքստում հիշատակվում է Բաբիլուն՝ Բաբելոնիան[2]: Հետազոտողի համար երկրանունների նմանությունից զատ, նման համադրության համար կռվան էր նաև հանգամանքը, որ բիայնական ուժերի համար առավել դյուրին էր Զագրոսյան լեռներով արշավել դեպի Բաբելոնիա[3]:

Վանի Սուրբ Պողոս-Պետրոսի եկեղեցում գտնվող Սարդուրի II-ի արձանագրությունը հայտնի էր դեռևս Ֆ. Շուլցի

---

[2] **Lehmann-Haupt.** 1926, 29; **Арутюнян.** 2001, 241 A_{1-9}; **Salvini.** 2018, A 9-3, I_{1-9}; **Հայոց պատմություն.** 2024, 27: Առաջարկված այլ տեղորոշումների համար տե՛ս **Dann.** 2020, 27.

[3] **Lehmann-Haupt.** 1926, 337-338.

հետազոտություններից[4]: Ամենայն հավանականությամբ, սույն բեկորները «Գանձադռան» ձախ խորշի դիմաց կանգնեցված կոթողինն են[5]:

Կոթողի հետևի կողմի արձանագրության բովանդակությունն աղերսվում է Սարդուրի II-ի՝ Իզոլուի արձանագրությանը[6]: Այն վկայում է Եփրատից անդին՝ Միլտիայի (Մելիդ) շրջանում Սարդուրի II-ի նվաճումների մասին: Սկզբնաղբյուրում վկայված է Մելիդի արքա Խիլարուադայի նստավայր Սասինիի նվաճման, արքայի հպատակեցման, ինչպես նաև այս շրջանում գտնվող ինը ամրոցները Վանի թագավորությանը միացնելու մասին[7]: Հարկ է նշել, որ արձանագրությունում վկայված տեղանունների տեղորշման առումով Կ. Ֆ. Լեման-Հաուպտն առանցքային էր համարում հայտնաբերման վայրը: Ելնելով վերոնշալ մոտեցումից՝ հետազոտողը

---

[4] Կոթողի վերին հատվածն ուղղահայաց բեկորված էր և երկու հատվածները հորիզոնական դիրքով գտնվում էին եկեղեցու ապսիսի կողքին գտնվող երկու փոքր խցերում՝ որպես քիվ պսակելով վերջիններս: Կոթողի ձախ հատվածն աջ խցի վերևում, իսկ երկրորդը՝ ձախի: Մինչ արշավախմբի հետազոտությունը հայտնի էր միայն ձախ խորշի արձանագրության դիմային հատվածը (**Schulz.** 1840, 298-299, XXXVIII): Արշավախմբի իրականացրած աշխատանքի ընթացքում պարզվեց, որ կոթողն արձանագրված է քառակողմ (**Lehmann-Haupt.** 1926, 136):

[5] **Salivini.** 2018, A 9-1; **Գրեկյան.** 2023, 119-120: Կ.Ֆ. Լեման-Հաուպտը, սակայն ենթադրում է, որ «Գանձադռան» արևելյան խորշի դիմաց՝ ժայռում պատվանդանի համար հղկված քառակուսում, երբեք չի կանգնեցվել կոթող, քանզի դրան խանգարել են Սարդուրի II-ի կրած պարտությունները Թիգլաթպալասար III-ից (**Lehmann-Haupt.** 1931, 626):

[6] **Арутюнян.** 2001, 242, B I; **Salvini.** 2018, A 9-1 Vo.

[7] **Арутюнян.** 2001, 244; **Salvini.** 2018, A9-4.

վկայված բոլոր տեղանունները տեղորոշում է Եփրատի աջակողմյան հատվածում[8]:

Ուրարտուի գերակայությունը Հյուսիսային Սիրիայում

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը ենթադրում է, որ Իզուլուի արձանագրությունում վկայած իրողությունները ծավալվել են Ք. ա. 743 թ. առաջ[9]: Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցուց հայտնաբերված վերոհիշյալ կոթողի ձախ կողային հատվածում[10] վկայված է դեպի հյուսիս-արևելք՝ Սևանա լճի ավազան կատարված արշավանք: Տարեգրության սույն հատվածը զուգադրելի է Սարդուրի II-ի՝ Ադամխանի (Վարդաձոր) արձանագրության հետ[11]: Տարեգրության մեջ Սևանա լճի ավազան կատարված արշավանքին հաջորդում է Ասորեստանի արքա Աշշուր-նիրարի V-ի (Ք. ա. 754-745) նկատմամբ տարած հաղթանակի հիշատակումը[12]: Սույն արշավանքը և հաղթանակը Կ. Ֆ. Լեման-Հաուպտն աղերսում է ասորեստանյան էպոնիմատի վկայությանը, ըստ որի Աշշուր-նիրարի V-ը Ք. ա. 754 թ. ձեռնարկել է արշավանքը դեպի Արպադ[13]: Կ. Ֆ. Լե-

---

[8] **Арутюнян.** 2006, 186-187.

[9] Հետազոտողն աղերսում է Ք.ա. 754 թ. դեպի արևմուտք կատարած Սարդուրի II-ի արշավանքի հետ (**Lehmann-Haupt.** 1910, 483):

[10] Կ. Ֆ. Լեման-Հաուպտի մոտ այն վկայված է ձախ հատվածում, ինչը պատճառ դարձավ որ շարունակաբար թյուր վերականգնվի տարեգրության հաջորդականությունը (**Lehmann-Haupt.** 1927, 137; **Salvini.** 2020, 21-23; **Գրեկյան.** 2023, 113):

[11] **Арутюнян.** 2001, 246; **Арутюнян.** 2006, 204-205; **Salvini.** 2018, A 9-6.

[12] **Арутюнян.** 2001, 242, DI+DII$_{8-12}$; **Salvini.** 2018, A 9-11, Sin. $_{8-12}$; **Lehmann-Haupt.** 1926, 137.

[13] **Millard.** 1994, 42, 59; **Grekyan.** 2023, 793: Բիայնական ուժերին հաջողվեց հաղթանակի հասնել ասորեստանյան բանակի գլխավոր

ման-Հաուպտը նախապես կարծում էր, որ Ք. ա. 754 թ. Արպադի շուրջ ծավալված իրադարձություններն ավարտվել են Ասորեստանի հաղթանակով[14]: Հետազոտողը, սակայն, հետագայում վերանայեց իր տեսակետը[15]: Սույն արշավանքներով Բիայնիլիի ծավալումը դեպի արևմուտք, ըստ հետազոտողի, նպաստեց նաև, որ թագավորության ազդեցության ներքո հայտնվի Հյուսիսային Սիրիան և անգամ պայմանավորի Իսրայելում ու Հրեաստանում ընթացող իրադարձությունները[16]: Սարդուրի II-ն Աշշուր-նիրարի V-ի դեմ պայքարում կարողացել է հասնել տարածաշրջանում ուրարտական գերիշխանության հաստատմանը: Այդ իսկ պատճառով, երբ Ասորեստանում իշխանության եկավ Թիգլաթպալասար III-ը (Ք. ա. 744-727), նա սկզբից ևեթ կենտրոնացավ իր գլխավոր հակառակորդի՝ ասորեստանյան աշխարհակալության խոչընդոտ Ուրարտուի դեմ և իրականցրեց ռազմավարչական բարեփոխումներ[17]: Ասորեստանի արքան սույն պայքարում Արպադ քաղաքը, որը Հյուսիսային Սիրիայի բանալին էր, ընտրեց որպես իր առանցքային գործողությունների մեկնակետ[18]:

Թիգլաթպալասար III-ի Ք. ա. 743 թ. հաղթանակը

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը դեռևս 1896 թ. նշում է, որ Ասորեստանի արքա Թիգլաթպալասար III-ի Ք. ա. 743 և 735 թթ.

հրամանատար Շամշի-իլուի նկատմամբ, ով նախկինում երկու անգամ անգամ կարողացել էր հաղթանակել (**Fuchs.** 2008, 89):

[14] **Lehmann-Haupt.** 1910, 482.

[15] **Леман-Хаупт.** 1938, 253.

[16] **Lehmann-Haupt.** 1931, 854.

[17] **Tsakanyan.** 2018, 121-122.

[18] **Lehmann.** 1896, 325.

Ուրարտուին առնչվող հաղորդումների վերաբերյալ չի տրվել երկու թագավորությունների միջև մղված պայքարի ամբողջական պատկերը[19]: Երկու թագավորությունների միջև ծավալված իրադարձությունները վերականգնելու համար հետազոտողը նախ անդրադառնում է ասորեստանյան էպոնիմատների վկայություններին:

Սկզբնաղբյուրում Ք. ա. 743 թ. վերաբերյալ հիշատակվում է. «*Ուրարտու երկիրը պարտվեց Արպադ քաղաքի մոտ*»: Ք. ա. 742 թ. և Ք. ա. 741 թ. առնչությամբ վկայված է՝ «*Արպադ քաղաքի դեմ*» և «*Դարձյալ նույն քաղաքի դեմ: Այն նվաճվեց երեք տարում*»: Ուշագրավ է, որ Ք.ա. 740 թ. էպոնիմատում վկայված է դարձյալ՝ Արպադ քաղաքի դեմ[20]: Կ. Ֆ. Լեման-Հաուպտը, էպոնիմատներում վկայված սույն իրողությունները հստակեցնելու համար հաջորդիվ քննում է աղբյուրագիտական վկայությունները[21]:

Ասորեստանի արքա Թիգլաթպալասար III-ի տարեգրությունում Ք. ա. 743 թ. իրողությունների վերաբերյալ նշվում է. «*Իմ գահակալության երրորդ տարում՝ Աշշուր (աստվածը)՝ իմ տերը քաջալերեց ինձ և... Սուլումալը Մելիդ երկրի, Թարխուլարան Գուրգում երկրի...: ...Բոլոր երկրներում նրանք վստահել էին միմյանց ուժին: Իմ տիրոջ՝ Աշշուր (աստծո) ուժով և զորությամբ ես կռվեցի նրանց դեմ (և) հաղթեցի նրանց: ...Ես սպանեցի նրանց ռազմիկներին (և) լցրեցի լեռների կիրճերը նրանցով (նրանց դիակներով):...Ես զավթեցի նրանց անթիվ մարտակառքերը (և) ...նրանց...Ճակատա-*

---

[19] **Lehmann.** 1896, 321; հմմտ.՝ **Rost.** 1893, XVII և հաջորդիվ:
[20] **Tadmor, Yamada.** 2011, Introduction, 17 (1. The Eponym Chronicle).
[21] **Lehmann.** 1896, 322-323.

մարտի ընթացքում ես գրավեցի …Սարդուրիի…1 … նրանցից 72950-ը …ից…Իր կյանքը փրկելու համար Սարդուրին փախավ գիշերով և (այդպիսով) փրկվեց շատ արագ՝ մինչ արեվածագը: …Կյանքեր կտրող նետով ես նրան հետ քշեցի դեպի Եփրատ գետի վրայով (անցնող) կամուրջը, որը գտնվում էր իր երկրի սահմանին….Իմ բանակը տիրացավ նրա անհամար ձիերին…

Ես կրակի մատնեցի նրա բազմաթիվ ռազմական սարքերը, (որոնք գտնվում էին) նրա ճամբարում»[22]:

Կալխուից հայտնաբերված հաջորդ՝ հանրագումարային արձանագրությունում, նշվում է. «*Սարդուրին՝ Ուրարտու երկրից ընդվզեց իմ դեմ և Մատի-իլիի հետ դավադրություն կազմակերպեց (իմ դեմ): Քիշտան և Խալպի երկրներում՝ Կումմուխի քաղաքի շրջաններում, պարտության մատնեցի ես նրան և գրավեցի նրա ամբողջ ճամբարը: Նա սարսափեց իմ զենքերի ահարկու փայլից և միայնակ փախավ՝ փրկելու համար իր կյանքը: Ես փակեցի նրան Տուրուշպայում՝ իր քաղաքում, և նրան իր քաղաքի դարպասների առջև ծանր պարտության մատնեցի: Ես բարձրացրի իմ արքայական պատկերը Տուրուշպա քաղաքի դիմաց: 70* ***բերու*** *(երկժամ) տարածությունը ես խրոխտ արշավեցի Ուրարտուի ընդարձակ երկրի միջով՝ մի ծայրից մյուսը (վերևից ներքև) և ոչ մի հակառակորդ ես չունեցա (այնտեղ)*»[23]:

Կալխուից գտնված մյուս արձանագրությունում առկա է մասնակի տարբերություն. «*Սարդուրին՝ Ուրարտու երկրից, ընդվզեց իմ դեմ և դավադրություն կազմակերպեց (Բիթ)-*

---

[22] **Tadmor, Yamada.** 2011, 9, 2'b-16'a.

[23] **Tadmor, Yamada.** 2011, 39, 20b-25a.

Ագուսի (երկրից) Մատի-իլիի հետ (իմ դեմ): Կումմուխի քաղաքի շրջանների՝ Քիշտանի և Խալպիի երկրների միջև, ես նրան լիովին պարտության մատնեցի և նրանցից խլեցի իր ամբողջ ճամբարը: Նա սարսափեց իմ զենքերի ահարկու փայլից, իր կյանքը փրկելու համար, նա հեծնեց մի զամբիկ[24] *ու գիշերը փախավ Սիզիր սարը՝ ժայռոտ լեռը, և բարձացավ (դրա վրա)*»[25]:

Կալխուից հայտնաբերված սույն երկու արձանագրություններում նաև նշվում է, որ Ուլլուբա և Խաբխի երկրները՝ Նալ լեռան «հետևում», նվաճվել են և վերածվել ասորեստանյան նահանգերի: Թիգլաթպալասար III-ն Ուլլուբա երկրում կառուցել է Աշշուր-իքիշա անունով քաղաք՝ նվաճված երկրներից իրականացնելով վերաբնակեցում[26]:

Հարկ է նշել, որ սկզբնաղբյուրում վկայված Ուլլուբա երկրի նվաճումը տեղի ունեցավ միայն Ք. ա. 739 թ.[27]: Ուլլուբայի հարավում գտնվող Նալ լեռը տեղորոշվում է հարավում Դեհոկի և հյուսիսում Զախոյի միջև և, թերևս, համադրելի է Արևելյան Խաբուրի հովտով ձգվող լեռնաշղթայի հետ[28]:

---

[24]Հին Հունաստանում ոչ ոք երբեք չէր հեծնում զամբիկ, իսկ Քսենոփոնը անգամ չի էլ քննարկում ձիավորի կողմից այն գնելու հանգամանքը: Հին Արևելքում իրողությունը համանման էր և Ուրարտուի արքայի՝ զամբիկ հեծնելը ասորեստանյան դառը ծաղրն է (**Lehmann.** 1896, 325; **Lehmann-Haupt.** 1910, 482):

[25] **Tadmor, Yamada.** 2011, 41, 15 ՛b-30.

[26] **Lehmann.**1896, 323; **Tadmor, Yamada.** 2011, 39, 25b-29, 41, 27-31, 49, 6-8; **Ցականյան.** 2018, 77:

[27] **Tadmor, Yamada.** 2011, Introduction, 17 (1. The Eponym Chronicle).

[28]**Kessler.** 1980, 165, 174; **Streck.** 1998, 91; **Yamada.** 2018, 21: Վարկածներից մեկի համաձայն Նալ լեռը գտնվել է Խարբերդից ոչ

Ուշագրավ է, որ Ուրարտուի արքա Մենուայի (Ք. ա. մոտ 810–790/780–ական թթ.) գահակալության շրջանում վկայված է Ուլիբա՝ Ուլլուբա, երկրի նվաճումը, որով և Արևելյան Խաբուրի հովիտն առավել քան կես դար անցավ Վանի թագավորությանը[29]:

Ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի Կալխուից հայտնաբերված վերոնշյալ առաջին արձանագրությունում այնուհետ թվարկվում են Ք. ա. 735 թ. արշավանքի ընթացքում նվաճված շրջաններն ու քաղաքները Տիգրիսի թունելի շրջանում. «*Էնզի երկիրը, Անգանու (և) Բենզու քաղաքները՝ ամրոցները Ուրարտու երկրի մինչև Կալա... գետը՝ դրա գետը: Ես միացրեցի (այս շրջաններն) Ասորեստանին և կցեցի դրանք «**turtānu**»-ի ինչքի նահանգին և Նաիրի երկրի նահանգին*»[30]: Կ. Ֆ. Լեման-Հաուպտի՝ ուրարտա-ասորեստանյան դիմակայությանն առնչվող աղբյուրագիտական հենքը սույն իրադարձությունների վերաբերյալ վերը բերված սկզբնաղբյուրներ են:

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը մերժում է Պ. Ռոսթի՝ Ք. ա. 743 թ. էպոնիմատի հիշատակության վրա հիմնված տեսակետը, որ հակառակորդ բանակների միջև ճակատամարտը տեղի է տեղի ունեցել Արպադ քաղաքի մոտ[31]: Հետազոտողը կարծում

հեռու և այս շրջանը նվաճվել է Սարդուրի II-ի կրած պարտությունից հետո (**Dann.** 2025, 12-16):

[29] **Salvini.** 1995, 74, 2018, A 5-9; **Dann.** 2020, 84-85.

[30] **Tadmor, Yamada.** 2011, 39, 32-36; **Lehmann-Haupt.** 1926, 77.

[31]**Rost.** 1893, XII, XVIII-XXI; **Lehmann.** 1896, 324: Մ. Սալվինին կարծում է, որ Սարդուրին Մելիդից դուրս գալով, նվաճում է Կումմուխի Ուիտա և Խալպա քաղաքները և պաշարում է Պարալան, որտեղ, թերևս, ապաստանել էր արքա Կուշտաշպի(լի)ն (**Арутюнян.** 2001, 241E; **Salvini.** 2018, A9-3 IV_{36-57}): Վերջինս, թեև վճարում է հարկը, սակայն աճապարում է Թիգլաթպալասար III-ի մոտ, որն արդեն պաշարել էր

է, որ այստեղ, ի դեմս էպոնիմատի վկայության, առկա է ոչ հստակ ձևակերպում: Նա սկզբնաղբյուրում վկայված իրողությունը՝ «*Արպադ քաղաքում՝ ուրարտացիների ոչնչացումը (սպանդը)*», մեկնաբանում է այլ կերպ: Ըստ դրա, Թիգլաթպալասար III-ը պաշարել էր Արպադը, երբ ուրարտական զորքը շարժվեց նրան հանդիման: Դադարեցնելով քաղաքի պաշարումը, Թիգլաթպալասար III-ը շարժվում է հակառակորդ բանակներին ընդառաջ: Կ. Ֆ.Լեման-Հաուպտը աղբյուրում վկայվածը՝ Արպադի պաշարումը և ուրարտացիների կոտորածը, զատում է միմյանցից որպես առանձին իրողություններ[32]:

Ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի՝ հակառակորդների միջև Ք. ա. 743 թ. մղված առաջին ճակատամարտը տեղի է ունեցել ոչ թե Արպադի մոտ, այլ ավելի հյուսիս, երբ Ասորեստանի արքան ընդառաջ է շարժվել իր հակառակորդներին[33]: Հետազոտողը նշում է, որ մեկ այլ առանցքային հարց է Ուրարտուի սահմանին՝ Եփրատի վրայով անցնող կամրջի գտնվելու վայրը: Իզուլի մոտ գտնվել է Եփրատի վրայով անցում, իսկ այստեղից ավելի հարավ, որտեղ Եփրատը հատում է Տավրոսը, այլևս առկա չեն միմյանց հավասար բարձրությամբ ափեր: Պայմանավորված այն հանգամանքով, որ Վ. Բելքը մինչ այդ

Արպադ քաղաքը: Կուշտաշպի(լի)ն է, հավանաբար, ասորեստանյան զորքին ուղեկցել դեպի ուրարտական ճամբար և տարեգրությունում արձանագրվել են միայն ուրարտական կողմի համար բարեհաջող ընթացած իրադարձությունները (**Salvini.** 1995, 75-76 և հղված գրականությունը, **Fuchs.** 2012, 153-154): Ք. ա 743 թ. պարտությամբ պայմանավորված տարեգրությունը չշարունակելու և կառուցվածքի մասին տե՛ս **Գրեկյան.** 2023, 119:

[32] **Lehmann.** 1896, 324; **Astour.** 1979, 9; **Գրեկյան.** 2023, 30-31:

[33] **Lehmann-Haupt**. 1926, 334-335.

Եփրատի կամրջի՝ Իզոլուի մոտ տեղորոշման հետ կապված, բանավեճ էր ծավալել Կ. Ֆ. Լեման-Հաուպտի հետ, վերջինս 1910 թ. լույս տեսած աշխատությունում նախապատվություն էր տալիս նրա տեղորոշմանը[34]: Հետագայում, սակայն, Կ. Ֆ. Լեման-Հաուպտը վերստին ենթադրեց, որ Իզոլուի արձանագրության շրջանը կարելի է համարել նաև Եփրատի կամրջի գտնվելու վայրը:

Ուրարտուի և Ասորեստանի հետագա պայքարը: Թիգլաթպալասար III-ի Ք. ա. 735 թ. արշավանքը

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը վիճարկում է Պ. Ռոսթի տեսակետը, ըստ որի Սարդուրի II-ի նկատմամբ Թիգլաթպալասար III-ի հաղթանակն Ասորեստանի համար ապահովեց տևական հաջողություն[35]: Արպադի պաշարման Ք. ա. 742-740 թթ. իրադարձություններն ուղղված էին նաև հակաասորեստանյան դաշինքի դեմ[36]: Երբ եռամյա պաշարումից հետո ասորեստանյան զորքը Ք. ա. 741 թ. նվաճեց քաղաքը, կարճ

---

[34] Սկզբնաղբյուրում վկայված կամուրջը Վ. Բելքը նախապես տեղորոշում էր Իզոլուի մոտ: Հետագայում հետազոտողը վերանայեց իր տեսակետը, այն տեղակայելով Սամոսատի շրջանում: Դրա առանցքային կռվանը Քիշտան և Խալպի քաղաքների համադրումն էր Սամոսատից հարավ՝ Քյուշտամ և Խալֆաթ բնակվայրերի հետ, որոնցից առաջինը Եփրատից արևմուտք, երկրորդն անմիջապես Եփրատի մոտ (**Belck.** 1904, 182-184; **Lehmann-Haupt.** 1910, 483): Վ. Բելքի առաջարկած սույն տեղորոշումները, սակայն այժմ չեն հաստատվում և ուրարտական աղբյուրներում վկայված, լճի մոտ գտնվող Խալպա՝ Խալպի տեղանունը տեղակայվում է Գյոլբաշ լճի շրջանում (**Astour.** 1979, 9-13):

[35] **Lehmann.** 1896, 326; **Lehmann.** 1910, 48.

[36] **Lehmann.** 1896, 326; **Dann.** 2025, 7; **Novotny.** 2023, 367-390.

ժամանակ անց ասուրական տիրապետությունը տապալվեց, քանի որ Ք. ա. 740 թ. էպոնիմատում դարձյալ հիշատակվում է Արպադի դեմ ձեռնարկված հերթական արշավանքը[37]:

Ք. ա. 740 թ. Արպադի անկումից հետո Հյուսիսային Սիրիայում Ուրարտուի և Ասորեստանի պայքարը շարունակվեց: Այս անգամ Ուրարտուին հակվեց Ունքի (Պատին) քաղաքը, որի դիմադրությունը ճնշվեց միայն երկու տարի անց՝ Ք. ա. 738 թ.:

Համաձայն տարեգրության, Թիգլաթպալասար III-ը Ք. ա. 738 թ. նաև հարկ ստացավ Իսրայելի արքա Մենահեմից, ինչի մասին վկայություններ առկա են նաև Աստվածաշնչում. «*Երկրի վերայ եկաւ Ասորեստանի թագաւոր Փուղը, եւ Մանայեմը Փուղին հազար տաղանդ արծաթ տուաւ*»[38]: Կ. Ֆ. Լեման-Հաուպտը ենթադրում է, որ Մենահեմի գահակալության առաջին տարիներին, ինչպես նաև հավանաբար հակաասորեստնյան դաշինքի ջանքերով Մենահեմի որդուն սպանած[39] Փակեեի գահակալության տարիներին Ուրարտուի և Իսրայելի միջև եղել է դաշինք: Հետազոտողը դա նաև պայմանավորում է Եսայու մարգարեությունում վկայված իրողությամբ. «*Ասորիքն առաջիցը եւ Փղշտացիքն ետեւիցը եւ պիտի ուտեն Իսրայէլին լիքը բերանով*»[40]: Սույն վկայությունը ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի փաստում է, որ Իսրայելը հարկադրված է

---

[37] **Lehmann.** 1896, 326.

[38] Աստուածաշունչ 1896, Դ Թագաւորաց, ԺԵ, 19; **Levine.** 1972, 231-232; **Tadmor, Yamada.** 2011, 14, 10b-12, 28, 2b-7, 35, iii 1-23.

[39] «Իւր զորապէտ՝ Ռովմելայի որդի Փակկէն եւ զարկեց նորան Սամարիայումը...եւ նորան սպանեց եվ թագաւոր եղաւ նորա տեղը» (Աստուածաշունչ. 1896, Դ Թագաւորաց, ԺԵ, 25):

[40] Աստուածաշունչ. 1896, Եսայիա, Թ, 12:

եղել միանալ դաշինքին՝ Դամասկոսի արքա Ռեծոնի[41] և փղշտացիների ճնշման արդյունքում[42]:

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը կարծում է, որ Թիգլաթպալասար III-ի Ք. ա. 738 թ. Իսրայել, ինչպես նաև՝ Ք. ա. 737 թ. մարերի դեմ ձեռնարկած արշավանքները դարձյալ պայմանավորված էին Սարդուրի II-ի դեմ Ասորեստանի պայքարով[43]: Երկու թագավորությունների պայքարն ավարտելու համար Ք. ա. 735 թ. Թիգլաթպալասար III-ն անձամբ արշավեց Ուրարտու, քանի որ համառ և տոկուն արքային այլ կերպ առերեսվել հնարավոր չէր[44]: Սույն ձեռնարկին նախորդել էր Ք. ա. 736 թ. դեպի Նալ լեռ՝ Ուլլուբա, կատարված արշավանքը[45]: Այն, ենթադրելի է, նպատակ ուներ ճնշելու այստեղ մնացած ուրարտական դիմադրության վերջին օջախները, և ըստ էության նաև նախապատրաստելու դեպի Ուրարտու կայանալիք հաջորդ տարվա խոշոր արշավանքը[46]:

Ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի, Կալխուի հանդիսավոր արձանագրություններում վկայված են միայն Ք. ա. 735 թ. Թիգլաթպալասար III-ի արշավանքին առնչվող իրողություն-

---

[41] Կ. Ֆ. Լեման-Հաուպտի սույն եզրակացությանն է աղերսվում նաև «Գանձադռան տարեգրությունում» վկայված Սարդուրի II-ի՝ Ռուիշիանի (Դամասկոսի անվանումը, թերևս, եգիպտական աղբյուրներում) երկրի արքա Ռածոնին հաղթելու Հ. Կարագյոզյանի առաջարկած վարկածը (**Կարգյոզյան.** 2005, 126):

[42] **Lehmann-Haupt.** 1911, 89-90.

[43] **Lehmann-Haupt.** 1911, 89-90; **Levine.** 1972, 40-42; **Գրեկյան.** 2023, 32:

[44] **Lehmann.** 1896, 326-327.

[45] **Tadmor, Yamada.** 2011, Introduction, 17 (1. The Eponym Chronicle); **Fuchs.** 2014-2016, 307-308.

[46] **Kessler.** 1980, 165, 21; **Yamada.** 2018, 21.

ներ, ինչը փաստում է նաև էպոնիմատում վկայված արշավանքն Ուրարտու երկրի դեմ[47]: Ըստ հետազոտողի, Սարդուրի II-ի և Թիգլաթպալասար III-ի՝ Քիշտան և Խալպի քաղաքների միջև մղված ճակատամարտը Ք. ա. 735 թ. է տեղի ունեցել, որից հետո պաշարվել է մայրաքաղաք Տուշպան[48]: Ուրարտագիտության ռահվիրայի նման ենթադրությունը բխում էր տվյալ շրջանի աղբյուրների քննությունից[49]:

Թիգլաթպալասար III-ի՝ Արևմտյան Իրանում (Լորեստան կամ Քերմանշահ) կանգնեցված կոթողի արձանագրությունում, որն ավելի վաղ է շարադրված (Ք. ա. 737 թ.), վկայված է, որ հակաասորեստանյան դաշինքը գլխավորողը հենց Մատի-իլիին էր, որը և ապավինել էր Սարդուրի II-ի աջակցությանը[50]: Քիշտանի և Խալպիի միջև ճակատամարտում՝ Սինզի (Գյոկսու) գետի մոտ, դաշնակիցների պարտությունից հետո Ասորեստանի արքան նվաճել է Գուրգում (Մարաշ) երկրի քաղաքները: Գուրգումի արքա Թարխուլարան Թիգլաթպալասար III-ին է ներկայացել ընծաներով և ընդունել

---

[47] **Tadmor, Yamada.** 2011, 17.

[48] Ըստ Մ. Սալվինիի, Ք. ա. 735 թ. մայրաքաղաք Տուշպայի պաշարում իրականում տեղի չի ունեցել, քանզի ոչ մի տեղանուն Եփրատից անդին վկայված չէ, մինչդեռ Ուլլուբայի գրավումը մանրամասն վկայված է, իսկ Ուրարտուի տարածքով անցնելու ձևակերպումները գրական-քարոզչական բնույթի են (**Salvini.** 1995, 73-74, 22; **Yamada.** 2018, 22, **Dann.** 2025, 10-11): Արձանագրություններից մեկում ասորեստանյան զորքի՝ վարարած Արածանին գետանցելը վկայված է մի համատեքստում, որում նաև հիշատակվում է Սարդուրիի նախկինում կրած պարտությունը (**Tadmor, Yamada.** 2011, 36, 11-13):

[49] Տեսակետի արծարծումը տե՛ս նաև **Меликишвили.** 1954, 275-276; **Пиотровский.** 1959, 82-83.

[50] Կումմուխի նվաճումից հետո հյուսիսիրիական միությունը Արպադի գլխավորությամբ հակվեց դեպի Ուրարտուն (**Diakonoff.** 1984, 86):

Ասորեստանի գերիշխանությունը: Այնուհետ ասորեստանյան զորքն արշավել է մեկ այլ վայր[51]:

Սույն աղբյուրում վկայված իրողությունները հետևաբար փաստում են, որ Քիշտանի և Խալպիի միջև ճակատամարտը միանշանակ կայացել է Ք. ա. 743 թ.: Թիգլաթպալասար III-ի Ք. ա. 735 թ. արշավանքն Ուրարտու, ինչպես Կ. Ֆ. Լեման-Հաուպտն էր նախապես կարծում, նպատակ էր հետապնդում հակառակորդին անակնկալի բերել հենց մայրաքաղաքում[52]:

Երթուղին

Հետազոտողը Թիգլաթպալասար III-ի Ք. ա. 735 թ. արշավանքի երթուղուն անդրադառնալով, նշում է, որ այն եղել է նրա ամենավտանգավոր ձեռնարկումներից մեկը: Ասորեստանյան բանակի Տուշպա շարժվելու համար Կ. Ֆ. Լեման-Հաուպտը քննարկել է երթուղու երկու տարբերակ: Ըստ առաջինի, որը խարսխված էր Վ. Բելքի հետազոտությանը, Թիգլաթպալասար III-ը կարող էր շարժվել Մեծ Զաբի հովտով, Բիլի բնակավայրի մոտ հատել Արևելյան Տիգրիսի հետ ջրբաժանը, այնուհետ Մերվանենից ընթանալ Հոգոց Վանք, Քասրիկ և Աստվածաշեն ճանապարհով: Շատախից Մոկս տանող ճանապարհը Կ. Ֆ. Լեման-Հաուպտը, տեղանքում իր հետազոտությունների վրա հենվելով, համարում է անանցանելի: Այս ճանապարհի զանազան ուղիներով, ըստ հետազոտողի առավելագույնը կարող էին ոչ մեծ զորաջո-

---

[51]**Tadmor, Yamada.** 2011 35, i 21-43, 47, 45-50; **Yamada.** 2018, 13, 16-17; **Novotny.** 2023, 367-390.

[52] **Lehmann.** 1896, 326-327; **Հմայակյան, Գրեկյան**. 2010, 16-17:

կատներ շարժվել՝ հասնելով Վանա լճի հարավ-արևելյան շրջաններ, ինչի մասին թերևս վկայում է Հայկի և Բելի առասպելը՝ Հայոց Ձորում տեղի ունեցած ճակատամարտի վերաբերյալ: Հարավից Ուրարտու ներխուժել հնարավոր էր նաև Արևելյան Տիգրիսը Թիլլ գյուղաքաղաքի մոտ հատելով[53]:

Ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի՝ երկրորդ երթուղու պարագայում ասորեստանյան զորքը Եփրատն անցել է Իզոլուի մոտ: Հետազոտողը սույն ուղղությամբ ներխուժումն ավելի հավանական է համարում, հենվելով Թիգլաթպալասար III-ի նվաճումների շարքում Էնզի երկրի (Տիգրիսի թունելի շրջանը) հիշատակության վրա[54]: Կ. Ֆ. Լեման-Հաուպտը նշում է, որ ասորեստանյան արձանագրություններից մեկում վկայված Բիրդաշու լեռը տեղորոշվում է Վանա լճի հյուսիսում և փաստում, որ ասորեստանյան արշավանքն անցել է հենց հյուսիսով[55]: Արձանագրությունը, որն ըստ հետազոտողի շարադրված չէ աշխարհագրական և ժամանակագրական հաջորդականության ծիրում, նախ վկայում է Տուշպային առնչվող եղե-

---

[53] **Lehmann-Haupt.** 1926, 75-76.

[54] **Tadmor, Yamada.** 2011, 39, 32-36.

[55]**Lehmann.** 1896, 327: Պ. Ռոսթն անդրադառնալով Կալխուից հայտնաբերված արձանագրությունում վկայված Բիրդաշու անունով լեռան հիշատակությանը, այն տեղորոշում է Վանա լճից հյուսիս՝ համադրելով Նեմրութի հետ: Հետազոտողը ենթադրում է, որ երբ ասորեստանյան զորքը պաշարել էր մայրաքաղաք Տուշպան, զորքի մի հատվածը շարժվել է դեպի հյուսիսային շրջաններ և նվաճել է մինչև Եփրատն ընկած շրջանները (**Rost.** 1893, XXVIII; **Tadmor, Yamada.** 2011, 39, 30-31): Մեկ այլ արձանագրութունում հիշատակվում են քաղաքներ, որոնք գտնվում էին «Նաիրի երկրի ծովի ափին», իսկ Բիրդաշան վնասված հատվածում վկայված է Էնզի և Ուրարտու երկրների քաղաքների համատեքստում (**Tadmor, Yamada.** 2011, 43, i 1- 24):

լությունները: Արշավանքի երթուղու նման վերականգնումը, սակայն, հակասում է սկզբնաղբյուրում վկայված իրողություններին, ինչպես նաև Կալխուից հայտնաբերված արձանագրությունների թվագրությանը[56]:

Եզրակացություններ

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը կարծում է, որ Սարդուրի II-ն իր արշավանքներով արևելքից և արևմուտքից օղակել էր Ասորեստանը, ինչը պայմանավորել է նաև տարածաշրջանում Ուրարտուի գերակայությունը: Հետազոտողը ենթադրում է, որ դա կասեցնելու համար ասորեստանյան էպոնիմատում հիշատակված դեպի Արպադ Ք. ա. 754 թ. ձեռնարկված արշավանքն աղերսվում է տարեգրությունում վկայված Աշշուրնիրարի V-ի նկատմամբ Սարդուրի II-ի հաղթանակին: Սույն իրողությամբ պայմանավորված՝ Ասորեստանի նոր գահակալ Թիգլաթպալասար III-ը Ք. ա. 743 թ. իր գործողությունների առանցքային մեկնակետ է ընտրում Արպադը և պաշարում քաղաքը: Հետազոտողը նախապես սույն իրողության հետ էր աղերսում Կումմուխի Քիշտան և Խալպի քաղաքների միջև ճակատամարտը: Չնայած Սարդուրի II-ի պարտությանը, Կ. Ֆ. Լեման-Հաուպը ենթադրում է, որ Վանի թագավորության գլխավորությամբ հակաասորեստանյան դաշինքի պայքարը շարունակվեց անգամ Արպադի անկումից հետո: Գրեթե երկու տասնամյակ ծավալված պայքարը պայմանավորեց Թիգլաթապալասար III-ի Ք. ա. 735 թ. արշավանքն Ուրարտու: Սկզբնաղբյուրում վկայված Էնզի երկրի տեղորոշմամբ պայ-

---

[56] **Հմայակյան, Գրեկյան.** 2010, 16-17; **Գրեկյան.** 2023, 32-33; **Novotny.** 2023, 370.

մանավորված՝ հետազոտողը թյուրիմացաբար ենթադրել է, որ Քիշտան և Խալպի քաղաքների միջև ճակատամարտը մղվել է Ք. ա. 735 թ., ինչին հաջորդել է Թիգլաթպալասար III-ի արշավանքն արևմուտքից և Տուշպայի պաշարումը: Կ. Ֆ. Լեման-Հաուպտի Ուրարտուի և Ասորեստանի միջև մղված պայքարին նվիրված հետազոտությունները պայմանավորեցին սույն խնդրի քննարկումը հաջորդ տասնամյակներում ևս, հետազոտողի պատմագիտական դիտարկումների ծիրում:

Գրականություն/References/Литература

1. Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների 1896, եբրայական եւ հունական բնագիրներից թարգմանուած, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պոյաճեանի տպարան, 1424 էջ:
   Bible, Book of Old and New Testaments 1896, translated from the Hebrew and Greek originals, Constantinople, Hakob Poyachyan Printing House, 1424 p.
2. **Գրեկյան Ե.** 2023, «Սարդուրյան տարեգրության» կառուցվածքը և ժամանակագրական որոշ հարցեր, «Պատմամշակութային ժառանգություն», № 4, էջ 111-126:
   Grekyan Y. 2023, The Structure of the “Annals of Sarduri” and Some Chronological Issues, “Historical and Cultural Heritage”, № 4, pp. 111-126.
3. **Կարագյոզյան Հ.** 2005, Աստվածաշունչը և սեպագիր աղբյուրները, «Աստվածաշնչական Հայաստան», Երևան, էջ 125-127:
   Karagyozyan H. 2005, The Bible and Cuneiform Sources, “Biblical Armenia”, Yerevan, pp. 125-127.

4. Հայոց պատմություն 2024, հ. I, Գիրք երկրորդ, Հին դարեր (Ք. ա. IX դար - Ք. հ. III դար), Երևան, «Զանգակ» հրատ., 700 էջ + 24 էջ ներդիր:
History of Armenia 2024, vol. I, Book II, Ancient Period (9th ce. BC – 3rd ce. AD), Yerevan, “Zangak” Publishing House, 700 pages, 24 page inserts.
5. **Հմայակյան Ս., Գրեկյան Ե.** 2010, Վանը հնադարում (Տուրուշպա, Տուշպա, Տոսպ), «Պատմաբանասիրական հանդես», № 3, էջ 3-19:
Hmayakyan S., Grekyan Y. 2010, Van in ancient times (Turušpa, Tušpa, Tosp), “Historical-Philological Journal”, № 3, pp. 3-19.
6. **Ցականյան Ռ.** 2018, Զանգվածային տեղահանությունների ու վերաբնակեցումների քաղաքականության ներքին առանձնահատկություններն Ասորեստանում Թիգլաթպալասար III-ի (մ. թ. ա. 745-727 թթ.) օրոք, «ՎԷՄ», № 3 (63), էջ 66-85:
Tsakanyan R. 2018, The features of the policy of mass deportations and resettlements in Assyria during the reign of Tiglath-Pileser III (745–727 BC), “VEM”, № 3 (63), pp. 65-85.
7. **Арутюнян Н.** 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван, изд. «Гитутюн» НАН РА, 533 с.
Harutyunyan N. 2001, Corpus of Urartian cuneiform inscriptions,Yerevan, Publishing House “Gitutyun” of NAS RA, 533 p.
8. **Арутюнян Н.** 2006, Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, 2-е изд., доп. и перераб, Санкт-Петербург, изд. Санкт-Петербургского унвиерситете, 365 с.
Arutyunyan N. 2006, Biainili - Urartu. The history of

wars and politics, and questions of place-name tudies. - 2-th rev. ed., with corrections and additions, St. Petersburg: St. Petersburg State University, Publishing House, 368 p.

9. **Леман-Хаупт К.** 1938, Вступительная лекция по истории и культуре Халдов, «Труды Тбилисского гос. университета», № 6, Тбилиси, с. 245-267.
   Lehmann-Haupt K. 1938, Introductory lecture on the history and culture of the Khalds, “Proceedings of Tbilisi State University”, № 6, Tbilisi, pp. 245-267.
10. **Меликишвили Г.** 1954, Наири-Урарту, Тбилиси, Издательство Академии Наук Грузинской СССР, 446 с.
    Melikishvili G. 1954, Nairi-Urartu, Tbilisi, Publishing House of the Academy of Sciences of the Georgian USSR, 446 p.
11. **Пиотровский Б.** 1959, Ванское царство (Урарту), Москва, изд. восточной литературы, 285 с.
    Piotrovsky B. 1959, Kingdom of Van (Urartu), Moscow, Publishing House of Oriental Literature, 285 p.
12. **Astour M. C.** 1979, The Arena of Tiglath-pileser III’s Campaign against Sarduri II (743 B.C.), “Assur” 2/3, pp. 1-23 (69-91).
13. **Belck W.** 1904, Die Steleninschrift Rusas' II Argistihinis von Etschmiadzin, “Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft”, Bd. 58, No. 1, S. 161-197.
14. **Dann R.** 2020, A study of the toponyms of the Kingdom of Bia/Urarṭu, with a contribution by Marie-Claude Trémouille, Rome, Ismeo, Serie Orientale Roma, Nouva Serie, vol. 19, 328 p.
15. **Dann R**. 2025, On the Western edge of Urartu some Remarks on the PossibleIndentification of the SARD(A)UR(R)IANA Mentioned by Tiglath-Pileser III with SARDURIḪINILI, “The Problems of the History of

Armenia”, № 1 (30), pp. 3-25:
16. **Diakonoff I.** 1984, The pre-history of the Armenian people, Translated from the Russian by Lori Jennings With revisions by the Author, Delmar, New York, Caravan Books, 241 p., Maps 3.
17. **Fuchs A.** 2008, Der Turtan Samsi-ilu und die große Zeit der assyrischen Großen (830-746), “Die Welt des Orients”, Bd. 38, S. 61-145.
18. **Fuchs A.** 2012, Urarţu in der Zeit, in: S. Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf, P. Zimansky (eds.),Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12–14 October 2007, “Acta Iranica” 51, Louvain, 2012, S. 35-161.
19. **Fuchs A.** 2014-2016, Ulluba/u, Reallexikon der Assirologie, Bd. XIV, S. 307-308.
20. **Goodpeed G.** 2007, A Hystori of the Babylonians and Assyrians, Gorgias Press, (reprint of the original edition published by the Charles Scribner's Sons, New York, 1902), 422 p.
21. **Grekyan Y.** 2015, The Regnal Years of the Urartian Kings Argišti Menuaḫi and Sarduri Argištiḫi, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies 9/1, pp. 91-124.
22. **Grekyan Y. H.** 2023, The Kingdom of Urartu, in: The Oxford History of the Ancient Near East, vol. IV, K. Radner, N. Moeller, D.T. Potts (eds), Oxford: Oxford University Press, pp. 769-864.
23. **Kessler K.** 1980, Untersuchungen zur historischen Topographie Nordmesopotamiens nach keilschriftlichen Quellen des 1. Jahrtausends v. Chr., Wiesbaden, Dr. Ludwig Reichert Verlag, 253 S.
24. **Lehmann C. F.** 1896, Chaldische Forschungen: 6. Tiglatpileser III. gegen Sardur von Urartu, “Zeitschrift für

Ethnologie 28, Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte, Mai-Sitzung", 321-327.

25. **Lehmann C. F., Belck W.** 1894, Ein neuer Herrscher von Chaldia, "Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete", Bd. 9, S. 82-99, 339-360.
26. **Lehmann-Haupt C. F.** 1910, Armenien einst und jetzt, Bd. I, Berlin, B. Behr's Verlag, 543 S.
27. **Lehmann-Haupt C. F.** 1926, Armenien einst und jetzt, Bd. II/1, Berlin-Leipzig, B. Behrs Verlag, 450 S.
28. **Lehmann-Haupt C. F.** 1931, Armenien einst und jetzt, Bd. II/2, Berlin-Leipzig, B. Behrs Verlag, 1067 S.
29. **Levine D. L.** 1972, Menahem and Tiglath-Pileser: A New Synchronism, "Bulletin of the American Schools of Oriental Research", vol. 201, pp. 40-42.
30. **Millard A.** 1994, The Eponyms of the Assyrian Empire 910-612 BC, "State Archives of of Assyira studies", vol. II, Helsinki, Helsinki University Press, 192 p.
31. **Novotny J.** 2023, The Assyrian Empire in Contact with the World, in: The Oxford History of the Ancient Near East, vol. IV, K. Radner, N. Moeller, D.T. Potts (eds), Oxford: Oxford University Press, pp. 352-424.
32. **Rost P.** 1893, Die Keilschrifttexte Tiglat pileser's III.nach den Papierabklatschen und Originalen des Britsichen Museums, Bd. I: Einleitung, Transscription und Uebersetzung, Wörterverzeichnis mit Commentar, Leipizg, Verlag von Eduard Pfeifer, 145 S.
33. **Salvini** 2018, Corpus dei testi urartei, vol. V, Revisione delle epigrafi e nuovi testi su pietra e roccia (CTU A), dizionario urarteo, schizzo grammaticale della lingua Urartea, Editions de Boccard, 506 S.
34. **Salvini M.** 1995, Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, Wissenschaftliche Buchgesellschaft, 257 S.

35. **Salvini M.** 2020, Das Schicksal der Keilschriftstelen des Reiches Urartu (9.-7. Jh. v. Chr.). Wiederverwendung, Entdeckung, Beschädigung, Rettung, “Alter Orient”, Bd. 17, S. 18-26.
36. **Schulz F. E.** 1840, Mémoire sur le lac de Van et ses environs, par M. F. Éd Schulz (Envoyé á Paris le 8 juin 1828), “Journal Asiatique”, Série III, 9, pp. 257-323.
37. **Streck M.** 1998, Reallexikon der Assirologie, Bd 9, 1./2. Lieferung, S. 91.
38. **Tadmor H., Yamada Sh**. 2011, The Royal Inscriptions of Tiglath-pileser III (744-727 BC), and Shalmaneser V (726-722 BC), Kings of Assyria, Royal Inscriptions of the Neo-Assyrian Period, vol. I, Winona Lake, Indiana, Eisenbraus, 211 p.
39. **Tsakanyan R.** 2018, Tiglath-Pileser III (745-727 B.C.): Mass deportations and resettlements policy in Assyria, “Journal of Armenian Studies”, № 1, pp. 116-136.
40. **Yamada S.** 2018, Ulluba and Its Surroundings: Tiglathpileser III’s Province Organization Facing the Urartian Border, in: Yamada S. (ed.). Neo-Assyrian Sources in Context: Thematic Studies on Texts, History, and Culture. State Archives of Assyria Studies, vol. XXVIII, Helsinki, pp. 11-40.

Ваге С. Саргсян, *Институт истории НАН РА, младший научный сотрудник*, **Борьба между Урарту и Ассирией в период правления Сардури II по исследованиям К. Ф. Леман-Хаупта**

Резюме

Борьба между Урарту и Ассирией в период правления Сардури II (ок. 771-735 гг. до н.э.) была впервые исследована К. Ф. Леман-Хауптом (1861-1938). Летопись Сардури II, записанная

на фрагментах верхней части обелиска, находящегося в церкви Святых Павла и Петра в Ване, также послужила источником при изучении этого феномена. Первые исследования о завоеваниях ближайших районов Евфрата, описанных в летописи, а также о битве между Урарту и Ассирией в 754 г. до н. э., были проведены К. Ф. Леман-Хауптом. По мнению исследователя, Сардури II своими походами окружил Ассирию с востока и с запада. Исходя из этих реалий, в 743 г. до н. э. новый ассирийский правитель Тиглатпаласар III выбрал город Арпад как стратегическую ключевую точку для своих дальнейших действий. Несмотря на поражение, Сардури II продолжил борьбу, что привело к нападению Тиглатпаласара III на Урарту в 735 г. до н. э. В ходе исследований, длившихся около четырёх десятилетий, К. Ф. Леман-Хаупт также пересмотрел некоторые свои взгляды по теме осады Арпада в 743 г. до н. э., ошибочно связав битву между городами Киштан и Халпи в Куммухе с осадой Тушпы в 735 г. до н.э.

Ключевые слова: Ассирия, Куммух, Арпад, Евфрат, Тиглатпаласар III, Тушпа, поход.

Vahe S. Sargsyan, *Institute of History of the NAS RA, Junior Researcher,* **The struggle between Urartu and Assyria during the reign of Sarduri II according to the research of K. F. Lehmann-Haupt**

Summary

The struggle between Urartu and Assyria during the reign of Sarduri II (ca. 771-735 BC) was first researched by K. F. Lehmann-Haupt (1861-1938). In examining this phenomenon, the researcher used the annals of Sarduri II, recorded on fragments of the upper part of an obelisk in the Church of Saints Paul and Peter in Van, as a primary source. The conquests in the Euphrates region, as described in

the annals, as well as the battle between Urartu and Assyria in 754 BC, were first studied by K. F. Lehmann-Haupt. According to the researcher, Sarduri II surrounded Assyria from the east and west with his campaigns. In light of these circumstances, the new Assyrian king, Tiglath-Pileser III, identified the city of Arpad as a strategic key point for his operations in 743 BC. Despite his defeat, Sarduri II continued the struggle, which led to Tiglath-Pileser III's campaign against Urartu in 735 BC. During his nearly four-decade-long research, K. F. Lehmann-Haupt also revised some of his earlier views on the siege of Arpad in 743 BC, mistakenly connecting the battle between the cities of Kishtan and Halpi in Kummuh with the siege of Tushpa in 735 BC.

Key words: Assyria, Kummuh, Arpad, Euphrates, Tiglath-Pileser III, Tushpa, campaign.